

### Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱՍԵՂՆԵՐԻ

#### ԱՂԱԽԻՒ

##### ՅԱԻՆՐԺԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԻՔ

Քո յաւերժի մէջ, որ տեսում է յար,  
Կեանքս կարճատեւ ակընթացք է լող.  
Քո յաւերժն իմ մէջ կըբերու ճամար,  
Ես ի՛նչքան լինեմ ներհուն ու խելօք:

Դու մեծ, դու հարուստ, մայրերի դու մայր,  
Մէջտ երկունքի մէջ ու միշտ նորածին,  
Քո մի վայրկեանը ինձ տալու ճամար,  
Ինչո՞վ հատուցեմ քո պարգեւակին,

Եւ ի՛նչքան տքնեմ, մաքառեմ ի՛նչքան,  
Որ հողիս զեզ տաք գանձերն իր բոլոր,  
Յոյզերն իր ամէն, սէրերն իրական,  
Եւ ինքը ապրի սուրբ Հրքճուանքը մօր:

Արդ վառիր դու ինձ տարբերօվք մեծ,  
Լըցրու զեղանով աշխարհն իմ հողու,  
Որ կեանքս դառնայ երգ մի նորաստեղծ,  
Ինչքան ամէն մի ակընթացքը քո: ❊

##### ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ

Հայրենի հողը սիրուն է մայրիկիս,  
Սիրուն է մայրիկիս, թող կանաչ մընայ.  
Վէշտն անազօրոյն, կորուստ ու կրակիծ  
Մայր հողի սրբոսին անճանաչ մընայ:

Թէ որ մայր դառնամ ու բախտը մի օր  
Մայրական սրբոսի իր վէրքը բանայ,  
Հայրենի հողը թող ծաղկի անդօրը,  
Որ սիրտըս վիշտն իր յաղթի, մոռանայ:

#### ՍԱՐՄԵՆ

##### ՍԻՐՈՒՆ ԱՂՋԻԿ

Միրուն աղջիկ, մօտ բեր սինին,  
Վըրան՝ Հայոց նըռան զինին,  
Թող ցընծութիւնը ծով դառնայ  
Մեր սրբտերում, մեր սեղանին.

Վառենք աստղերը երկրային,  
Հըպարտ նայենք ասպազային,

Նըրա դիմաց կը տփռուենին  
Աշխարհները հէքաթային:

Թէ այդ օրուան մենք լըհասնենք,  
Որքի՛ր մահուան դանակը նենդ,  
Թող մեր հողին՝այդ նոր կեանքի  
Գովքը անի որպէս մի երգ:

Թէ դու հասնես այդ լոյս օրուան,  
Աճիւնը տար մեր ազատ Վան,  
Թող Հայրենի ծաղիկներին  
Ջուր փայ իմ սիրտը՝ շատրուան: . . .

Միրուն աղջիկ, մօտ բեր սինին,  
Վըրան՝ Հայոց կարճիր զինին,  
Որքենք սիրով ու միշտ փառք տանք  
Հերոսամայր Հայաստանին:

##### ԽՆԴՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Ո՞վ Հայուհի դալարիբան,  
Դատան օրերն անդարձ կորան,  
Սեղանը բաց, զինին վըրան,  
Թասերը լե՛ց բերնեբերան:

Հայոց ազատ  
Արեւի տակ  
Որմենք, խընդանք,  
Կեանքին փառք տանք:

Դու, սեւաշեայ իմ սրբոսակից,  
Մեր շէն ու նոր օծախնեբից  
Կանչիր թող զան դուռ ու դըրիկից,  
Քո նուրբ մնողով թասերը լեց:

Հայոց ազատ  
Արեւի տակ  
Որմենք, խընդանք,  
Կեանքին փառք տանք:

Մեր պապերի հողին արգար,  
Հազար տարուայ տենչն անկատար  
Պահեց անչէլ ու անվըթար . . .  
Հիմայ ծիճողուն բաժակըդ առ:

Հայոց ազատ  
Արեւի տակ  
Որմենք, խընդանք,  
Կեանքին փառք տանք:

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՂԲԻՒԻ

Մա՛յր իմ, եկել եմ քո հողաթըմբի առջև ծունկ  
 չոքել,  
 Եւ կարօտալառ աղաչում եմ քեզն խոր քընկեց  
 վեր կա՛ց:  
 Քո շուրջը նայիր, տես ի՛նչ փառահեղ դարձեր  
 են հազեղ  
 Մեր ոստանները, սար ու ձորերը, դաշտերը  
 ծաղկած:  
 Ե՛կ մեզ հետ տօնի՛ր յաղթանակները մեր մեծ  
 աշխարհի,  
 Ու հարօտանեկան թաշկինակը ա՛ռ հարսիդ հետ  
 պարի՛ր,  
 Քո շուրթով ըմպի՛ր մեր Կրթանկութեան աղբիւ-  
 րից մի թաս,  
 Եւ այն ժամանակ դու է՛լ շես մեռնի, դու կ՛ան-  
 մահանաս:

Ջուրը իր հեզ կարկաջով մի հէքաթ է քաղցրա-  
 նուշ...  
 Մէկն անծանօթ բառերով փըսփըսում է իմ  
 սրբտում՝  
 շեւանքը, քո կեանքը անցեալ, դարձաւ երգը ու  
 վերյուշը:  
 Կատարներին սարերի արեւի շողը վերջին  
 Ուզում է իր համարյոթով ողջ հորիզոնն հրդեհել...  
 Օ՛ տուները, քիչ հեռուն, որոնց նիրհող պատե-  
 րին,  
 Գաղջ երեկոն իր անդորրն ու մեծ խորհուրդն է  
 սքփոել...  
 Դաշտի վըրայ իջել է իրիկնային մի մըշուշ,  
 Իրիկնային մըշուշում խոկում է հողը հիմայ,  
 Հասկերն ասես պատմում են մոռացուած քաղցըր  
 մի յուշ,  
 Հասկերն այնպէս են շընչում որ երեկոն չիմանայ:

ԽՈՂ

ԱՆԳՐԱՆԿ ԹԵՐԱՅԱՆ

ԻՐԻԿՆԱՅԻՆ

Դաշտի վըրայ իջել է իրիկնային մի մըշուշ,  
 Իրիկնային մըշուշում խոկում է հողը հիմայ,  
 Հասկերն ասես պատմում են մոռացուած քաղցըր  
 մի յուշ,  
 Հասկերն այնպէս են շընչում որ երեկոն չիմանայ:  
 Սայլերն ահա անցնում են երկար ու սուր ճը-  
 ոինչով,  
 — Օ՛, մի՛ յուզէք, մի՛ յուզէք նինջը խաղաղ  
 դաշտերի.  
 Հեռուից մի երգ է լըսում, դառնում ա՛յնքան  
 հեշտ ու դո՛վ:  
 Որ հասկերին, ծիլերին անհուն օրօր կը լինի:  
 Իրիկնային մըշուշում անցնում եմ ես օրօրուն,  
 Հողը բերրի է ա՛յնքան, ա՛յնքան քնքուշ,  
 անխըռով...  
 Թըւում է ինձ որ հիմայ ես քայլում եմ ու գընում  
 իմ պապերիս ըրթների ու սըրտերի վըրայով:  
 Առուի եզրին ուսինքր թախծում են խոնջ ու  
 սըրտում,

Սերմերը քանձիր դու հողին,  
 Մատները երբեք չըբողան,  
 Հարազատ հողն է քո ուղին,  
 Ձի դաւի հողը նախրեան:  
 Հուտները դառնան հասուն բերք,  
 Ինչպէս տաք կուրծքը աղջկայ,  
 Օրերը լինեն խինդ ու երգ,  
 Օրերը Ժպտին մեծ վաղուան:  
 Դու լըսի՛ր զարկին Մայր Հողի,  
 Երբ բերքերը շընձես դու մի օր-  
 նա ա՛յնքան խոհուն երգ ունի  
 Քո բերքում, սըրտում թեւաւոր:  
 Սերմերը քանձիր դու հողին,  
 Մատները երբեք չըբողան,  
 Հարազատ հողն է քո ուղին,  
 Ձի դաւի հողը նախրեան:

ՄԵՐ ՄԵՐՏԸ ՔԵՁ

Մեր սիրտը ահա բերել ենք մենք քեզ,  
 Քո զարկի, տնջի, յոյզերի համար,  
 Երազը մեր վառ ձուլել երազիդ,  
 Որ նա բարձրանայ, դառնայ երգ ու խինդ,  
 Մեր սիրտը ահա բերել ենք մենք քեզ: